ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 26 հուլիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Պետրոսյանի
Անդամակցությամբ՝ Ֆ.Թոխյանի
Ա. Թունյանի

Ուսումնասիրելով Գևորգ Հունանյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Գևորգ Հունանյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան (դիմումը ՀՀ սահմանադրական դատարան է մուտքագրվել 2016 թվականի հուլիսի 12-ին)՝ խնդրելով.

«ՀՀ Սահմանադրության 3-րդ, 61-րդ, 63-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետը»:

Դիմողը գտնում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կիրառված՝ վիճարկվող իրավադրույթով սահմանված՝ վճռաբեկ դատարան դիմելու համար նախատեսված պարտականությունը, խախտելով արդարադատության մատչելիության և հասանելիու-

թյան սկզբունքները և հակասելով սահմանադրահիրավական մի շարք նորմերի, խոչընդոտում է իր դատավարական իրավունքների իրացմանը:

Դիմողի կարծիքով՝ ողջամիտ չէ վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշումները վճռաբեկ դատարանին ներկայացնելու պարտականություն նախատեսելը ոչ միայն այն պատճառով, որ այդ որոշումներին տիրապետում է վճռաբեկ դատարանը, այլ նաև այն պատճառով, որ այդ որոշումներն առկա են համացանցում և դրանց հասանելիության ապահովումը մեծ ջանք չի պահանջում:

Ղեկավարվելով §Սահմանադրական դատարանի մասին¦ ՀՀ օրենքով և ելնելով խնդրո առարկա անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքներից՝ գտնում ենք, որ դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը ՀՀ սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի հունվարի 27-ի ՎԴ/0133/05/14 որոշմամբ վերադարձվել է նաև այն պատճառաբանությամբ, որ վճռաբեկ բողոք բերած անձը բողոքում մատնանշել է ՀՀ վճռաբեկ դատարանի և ՀՀ վարչական դատարանի մի շարք որոշումներ, սակայն բողոքին չի կցել նշված դատական ակտերը: Դիմողը վերացրել է վճռաբեկ դատարանի հիշյալ որոշմամբ արձանագրված սխալը և կրկին ներկայացրել վճռաբեկ բողոք: Սակայն ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 2016 թվականի մարտի 9-ի ՎԴ/0133/05/14 որոշմամբ արձանագրել է, որ դիմողը թույլ է տվել նոր սխալ, մասնավորապես՝ վճռաբեկ բողոքին կից չի ներկայացրել նոր ներկայացված վճռաբեկ բողոքի պատճենը գործին մասնակցող անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչությանն ուղարկելու վերաբերյալ ապացույցը, ինչի արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանն առանց քննության է թողել վճռաբեկ բողոքը:

Վերոնշյալի հիման վրա գտնում ենք, որ առկա չէ պատճառահետևանքային կապ դիմողի սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի 24.11.2009թ. ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով §Սահմանադրական դատարանի մասին¦ ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Գևորգ Հունանյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

26 հուլիսի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/1-26